

ՇՐՋԱՆԱԽԱՐՏԻՑ ՄԻՈՒԹԻՒՆ
ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ



1358

ԾՐԱԳԻՐ — ԿԱՆՈՆԱԳԻՐ



ԳԱԶԻՐԷ

1930



ԿԼԿ
210

ԳԱՆՈՒՍՏԵԱՆ ՇՐՋԱՆԱԿԱՐՏԻՑ ՄԻՈՒԹԻՒՆ

ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ



ՆՊԱՏԱԿ

Յօդ. 1.— Գալուստեան Շրջանաւարտից Միութեան նպատակն է՝

ա — Միութեան կապը հանդիսանալ բոլոր շրջանաւարտ սաներուն, ինչպէս նաեւ այս վերջիններուն եւ Գալուստեան վարժարանի միջեւ:

բ.— Նուիրելի Գալուստեան Ա.գգ. վարժարանի բարոյա-կրթական եւ նիւթական յաւաքցիմութեան:

դ.— Նուիրաւիլ իր անդամներուն բարոյական, մասու-
րական թէ ժիզկական զարգացման, ազգային տանիքի
յատկանիշներու համապատասխան եղանակաւ:

դ.— Աշխատիլ, կարելիութեան սահմանին մէջ, որ վար-
ժարանին ընթացաւորանքը գործնական կեանքի լաւա-
գոյն տապարելներուն հետեւին ու ի հարկին աջակցիլ
անոնց տեղաւորման ու գործ կաշարայել:

ՄԻՋՈՅՆԵՐ

Յօդ. 2.— Միութիւնը կը հետապնդէ իր նպատակին
իրագործումը գլխաւորաբար հետեւեալ ուղիով.—

ա.— Կազմակերպել գրական ու գեղարուեստական
ընկերային թէ հրապարակային հաստոյքներ, հանդէսներ,
դասախօսութիւններ եւ դասընթացներ:

բ.— Անդամական պառօններ կամ թէյանդաններ
սարքել:

գ.— Զարկ տալ վարժարանին աշակերտական գրադա-
րանին ու նոյապէս հաստատութեան մէջ մատենադարա-
նը օգտուելով միանգամայն անկէ:

դ.— Վարժարանին մէջ ընթերցարանի հաստատել:

ե.— Ուժ տալ յօգուտ ազատիկ աշակերտաց կազուս-
տելէնին եւ ցերեկեայ հաշին համար քափուած ջանքերուն:

զ.— Թեւադրութիւններ ներկայացնել Պատ. Հագա-
րաբնութեան եւ Պատ. Տնօրէնութեան վարժարանին ընդ-
հանուր յառաջդիմութեան համար:

է.— Կապ հաստատել տեղւոյն վաճառականական կամ
նարաարարուեստական հայ թէ օտար տուներուն, անկախ
արհեստաւորականներու եւնքի հետ յօգուտ ընթացաւորա-
ներու լաւագոյն տեղաւորման գործին:

ՀԱՍՏԱՅԻՆ ԱՂԲԻՒՐՆԵՐ

Յօդ. 3.— Միութեան հասոյքի զլխաւոր աղբիւրներն
են.—

ա.— Անդամավճար, նաւագագոյն ամիսը 2 Ն.Գ. ողջ:

բ.— Նուիրատուութիւններ:

գ.— Նուիրահաւաքութիւններ:

դ.— Հասարակութիւն հանդէսներ:

ե.— Անհանկահաճութիւն, եւն.:

ԱՆԳՆԱՄԱՅԻՆՅԱՆԹԻՒՆ

Յօդ. 4.— Միութեան գործին անդամ են Պալուստեան
վարժարանի երկսեռ շրջանաւորներէն անոնք որ առ-
ուոյ կ'արձանագրուին: Իսկ համակիր անդամ կ'արձա-
նագրուին ամէն անոնք որ, առանց շրջանաւորն ըլլալու,
աշակերտած են նաւագագոյն երեք տարի Պալուստեան
Ա.գ.գ. Նախակրթարանին:

Յօդ. 5.— Միութեան բարեբար անդամ կը հաշակուի
ամէն ազգային որ միանուագ կերպով 100 Նգ. ոսկի կամ
համարմէն նուիրատուութիւն մը կը կատարէ յօգուտ Միու-
թեան նպատակին: Իսկ պատուոյ անդամ անոնք որ միա-
նուագ կերպով կամ 5 տարուան ընթացքին 50 Նգ. ոսկի
կը նուիրեն:

Պատուոյ անդամ կրնան հաշակուիլ նաեւ, Ընդհանուր
ժողովի երկու երրորդի մեծամասնութեան ձայնով, այն
անդամները որոնք Միութեան յառաջդիմութեան ի նպաստ
գնահատելի գործունէութիւն ցոյց տուած են նաւագագոյն
5 տարի ամբողջ կամ բացառիկ ծառայութիւններ մատ-
ուցած են:

Հատ կանոնագրի, Միութեան պատուոյ անդամ են Դալուստեան Ազգ. վարժարանի Նախակրթարանին այն բոլոր ուսուցչուհիներն ու ուսուցիչները որոնք առնուազն 5 տարուայ անընդհատ պաշտօնավարութիւն ունեցած են վարժարանին մէջ:

Յօդ. 6.— Սնդամները պարտին յարգել Միութեան Ծրագիր-Կանոնագրի բոլոր տրամադրութիւնները եւ աշխատել որդեգրուած նպատակին յաջողութեան:

Յօդ. 7.— Ունէ անդամ որ հակառակ կը շարժի Միութեան ոգիին եւ ուղղութեան, յետ Վարչութեան բրնձութեան կը հեռացուի Հնդի. Ժողովի երկու երրորդի մեծամասնութեան ձայնով:

ՀՈՎԱՆԱԽՈՐՈՒԹԻՒՆ

Յօդ. 8.— Դալուստեան Շրջանաւարտից Միութիւնը կը գտնուի Վիճակիս Առաջնորդ Սրբազան Հօր բարձր հովանաւորութեան իսկ վարժարանին Պատ. Տնօրէնութեան նախագահութեան տակ:

Միութեան նախագահը բուէի իրաւունք ունի Միութեան բոլոր վարչական թէ անդամական ժողովներու ընթացիկն եւ իր ձայնը երկու բուէի համագործ:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդ. 9.— Եօրր անդամներէ բաղկացած Վարչութիւն մը կը վարէ Միութեան գործերը, համաձայն ներկայ Ծրագիր-Կանոնագրին: Վարչութիւնը կրնայ, մասնակի աշխատութիւններու համար, Յանձնախումբեր կազմել իր կրողութեան տակ:

Յօդ. 10.— Երր Վարչութեան անդամներէն մին կը երաժարի, Վարչութիւնը կրնայ առանկազոյն բուէ տաացող շրջանաւարտը անդամակցութեան կրաւրիկ պայմանաւ որ այս կերպ ամբողջացում մը երկու անգամը չանցնի:

Յօդ. 11.— Վարչութիւնը կ'ընտրուի Հնդի. Ժողովէն գաղտնի բուէարկութեամբ:

Յօդ. 12.— Վարչութեան պաշտօնավարութեան շրջանն է երկու տարի: Ան պարտի սակայն ամէն տարի նիւրակաւ թէ բարոյական համարառութիւն կատարել Հնդի. Ժողովին, այդ համարառութեան մէկ պատճէնը նախապէս յիշով Պատ. Հոգարարձութեան առ ի նկատաւորութիւն:

Յօդ. 13.— Վարչութիւնը կ'ընտրէ իր Դիւանը բաղկացած:

ա.— Ատենապետ մը որ կը վարէ ժողովին աշխատութիւններն ու նիւտերը եւ կը հսկէ տրուած որոշմանց անրերի գործադրութեան:

բ.— Ատենադպիրէ մը որ կը կատարէ Ժողովին տտեհագրութիւնները, թղթակցութիւնները, կը պատրաստէ օրակարգը եւ կ'աշակցի Ատենապետին աշխատութեանց:

գ.— Գանձապետ մը որ կը գրողի Միութեան նիւրական կէսմ'ուտով եւ գործառնութիւններով:

Յօդ. 14.— Վարչութեան թղթակցութիւնները կը տտարագրուին Ատենապետին եւ Ատենադպիրին կողմէ իսկ ընկալագիրները Ատենապետին եւ Գանձապետին կողմէ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Յօդ. 15.— Հնդիսանուր Ժողովը, բաղկացած Միութեան բոլոր գործօն անդամներէն, համարառու վերին

Մարմինն է որ կ'ընտրել Վարչությունը, կը հսկէ ներկայ ծրագիր-Կանոնագրի անբերի գործադրութեան եւ կը սահմանէ պիտանէն, կ'ընտրել երկու հաշուներնիչ յառաջիկայ շրջանի համար եւլն:

Յօդ. 16.— Ընդհանուր Ժողովը կը գումարուի, Վարչութեան հրաւերին վրայ, ամէն տարի Յուլիին Ա. Կիրակին լսելու համար Վարչութեան նիւթական եւ բարոյական համարառուութիւնը, բնութիւնը մարչութիւնը, գրադելու եղանակ առաջարկներով ու իր օրակարգին վրայ գտնուող այլ բոլոր խնդիրներով:

Յօդ. 17.— Նոր Վարչութեան մը միամեայ գործունւութիւնը գահացուցիչ չէ, Ընդհ. Ժողովը Վարչութեան պաշտօնավարութեան շրջանը չբացած, կը ձեռնարկէ նորի մը բնորութեան: Հրաժարեալ Վարչութեան անդամները վերընտրելի են:

Յօդ. 18.— Ընդհ. Ժողովը կ'ունենայ իր Մայր Դիւանը, ընտրուած օրուայ Նիսիին համար միայն, բաղկացած Ասեմնապետէ եւ Ասեմնադպիրէ: Մայր Դիւանը կը վարէ Ընդհ. Ժողովոյ Նիսար:

Յօդ. 19.— Ընդհ. Ժողովը օրինաւոր նիստ կը գումարէ ամէն անգամ որ ներկաներուն քիւր Միութեան անդամներու մէկ չօրրոյցին կը համապատասխանէ: Հակառակ պարագային օրինաւոր նիստ կը գումարուի Ա. հրաւերի վրայ ու ինչ որ ալ ըլլայ ներկաներուն քիւր:

Յօդ. 20.— Ընդհ. Ժողովը բացառիկ Նիստի կը հրաւիրուի ամէն անգամ որ Միութեան անդամներուն մէկ ինքնորոյրը գրաւորապէս պահանջէ ու եւ խնդրոյ մը տարի:

Յօդ. 21.— Միութեան Ժողովներուն մէջ, որոշումները կը տրուին ներկաներուն բացարձակ մեծամասնութեան ձայնով, բացի Յօդ. 5ի եւ 7ի տրամադրութենէն:

ԼՈՒՇՈՒՄ

Յօդ. 22.— Միութիւնը կը լուծուի երբ իր անդամներուն քիւր 25-էն վար կ'իջնէ:

Յօդ. 23.— Միութեան լուծման պարագային իր բոլոր գոյները, դրամ, կտրատի եւլն. Վարժարանին կը մնան:

ՎՍԻՆԲՐԱՅՈՒՄ

Յօդ. 24.— Ներկայ ծրագիր-Կանոնագիրը, որդեգրուել յետոյ Միութեան անդամների Նիստին, կը ներկայացուի Վարժարանի Պատ. Հոգաբարձութեան առ ի վաւերացում:

Յօդ. 25.— Ներկայ ծրագիր-Կանոնագրի մէջ ունէլ փոփոխութիւն պէտք է ենթարկուի նախորդ յօդուածով նախատեսուած վաւերացման:

Յօդ. 26.— Ներկայ ծրագիր-եռամսյակի ոգիին, ուղ-
ղութան և տրամադրությանը դեմ չեն, բերացման պա-
րագային Հոգաբարձուրդներ իրեն կը վերապահէ անհրա-
ժեշտ տնօրինական իրաւունքը:

Գաիրէ, 9 Յունիս 1929

ՎԱԽԵՐԱՅՈՒԱԾ 5 ՅՈՒԼԻՍԻ ԼԵ. ՆԻՍՏԻՆ ՄԷՋ ԵՒ ՅԱՆՋՆՈՒԱԾ

ԳԱԼՈՒՍՅԵԱՆ ՇՐՋԱՆԱԽԱՐՏԻՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԱՐԺԱՆ

ՎԱՐՋՈՒԹԵԱՆ ԱՌ Ի ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆ

Ի ԴԻՄԱՅ ԳԱԼՈՒՍՅԵԱՆ ԱԶԳ. ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺ.Ի

ՀՈԳԱԲԱՐՋՈՒԹԵԱՆ

ԱՏԵՆԱԴՊԻՐ

ԱՏԵՆԱՊԵՏ

ՍԵՒՅՕՆՔԵԱՆ Շ.

Պ. ՏԵՓՈՅԵԱՆ

5/210

(ԿՆԻՔ ՀՈԳԱԲԱՐՋՈՒԹԵԱՆ)



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0533684

E 207

210

ՀԱՅԱՍՏԱՆ

Union des Anciens Elèves

de l'Ecole Nationale Arménienne

BOULAC — LE CAIRE

ՏՄԱՐԱՆ ՄԱՍԻՍ